ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
“ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ” ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԱՐԱՅԻ ԵՐՆՋԱԿՅԱՆԻ ԱՄՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.** Լուսինե Երնջակյան:
   զբաղեցրած պաշտոնը. “Երևանի կամերային պետական թատրոն” ՊՈԱԿ-ի տնօրեն, ռեժիսոր:

2. **Գործուղման վայրը**՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:
   Գործուղման ժամկետը՝ 2025 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 2026 թ. հունվարի 20-ը:

3. **Հրավիրող կողմը**. ԱՄՆ “DEMQ Inc.” կազմակերպություն:

4. **Գործուղման նպատակը.**
   Գործուղման նպատակն էր կազմակերպել և նախապատրաստել թատրոնի ներկայացումների հյուրախաղային ցուցադրությունները Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որոնք նախատեսված են 2026 թվականի մարտ ամսին՝ ամերիկյան կողմի հրավերով, ինչպես նաև ապահովել հյուրախաղերի գեղարվեստատեխնիկական, կազմակերպչական և գովազդային բաղադրիչների նախապատրաստումը և վարել բանակցություններ միջազգային հյուրախաղային համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

5. **Քննարկված թեմաները.**

– Թատրոնի հյուրախաղերի ձևաչափը, ժամկետները և անցկացման պայմանները:
– Թատերախմբի գտնվելու, տեխնիկական պահանջների և լոգիստիկայի կազմակերպումը:
– Հյուրախաղերի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումն ու համաձայնեցումը:
– Բեմական ձևավորման և դեկորացիաների պատրաստման կազմակերպումը տեղում:
– Ներկայացումների անցկացման վայրերի տեխնիկական հնարավորությունները:
– Գովազդային արշավի հայեցակարգը և իրականացման ժամկետները:
– Ապագա հյուրախաղային և կրթական ծրագրերի հեռանկարները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Գործուղման ընթացքում անցկացվել են աշխատանքային հանդիպումներ և բանակցություններ.
– ընդունող կողմի ներկայացուցիչների հետ՝ հյուրախաղերի կազմակերպչական, տեխնիկական և ժամկետային հարցերի շուրջ,
– բեմական դեկորացիաների պատրաստմամբ զբաղվող տեղական մասնագետների և կապալառուների հետ,
– թատրոնների և մշակութային հարթակների ներկայացուցիչների հետ՝ ներկայացումների անցկացման պայմանների, դահլիճների տարողունակության, տեխնիկական հագեցվածության և շահագործման պայմանների վերաբերյալ,

– գովազդային գործընկերների հետ՝ ներկայացումների առաջխաղացման ձևաչափերի, տեսողական և տեքստային նյութերի հարմարեցման հարցերով:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

– Դեկորացիաների տեղափոխման բարձր արժեքի պատճառով ընդունվել է որոշում դեկորացիաները պատրաստել Ամերիկայի Միացյալ Նահանգների տարածքում:
– Համաձայնեցվել են բեմական ձևավորման էսքիզները, օգտագործվող նյութերը, ինչպես նաև պատրաստման և մոնտաժի ժամկետները:
– Նախնական համաձայնություններ են ձեռք բերվել հյուրախաղերի կազմակերպչական և տեխնիկական հիմնական պարամետրերի վերաբերյալ:
– Ձևավորվել են գովազդային արշավի իրականացման ընդհանուր մոտեցումները և ժամկետային շրջանակները:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Գործուղման ընթացքում իրականացվել են նաև նախնական բանակցություններ և քննարկումներ հետևյալ ուղղություններով.
ա) «Ես անուն չունեմ» մոնոներկայացման հյուրախաղերի կազմակերպում ԱՄՆ-ում: Առաջարկվում է ներկայացումները իրականացնել մշակութային-գրական միջոցառումների շրջանակում՝ համադրելով հեղինակի՝ Սոնա Վանի, գրքի շնորհանդեսի հետ, որի մոտիվներով ստեղծվել է ներկայացումը: Քննարկվում են հնարավոր հարթակները, միջոցառումների ձևաչափը և ընդունող կողմի գործընկերային մասնակցությունը:
բ) Վարպետաց դասերի և կրթական ծրագրերի շարք թատրոնի ներկայացուցիչների մասնակցությամբ, այդ թվում՝ Արա Երնջակյանի կողմից, մասնագիտական և կիսամասնագիտական լսարանի համար:
Ծրագրերը կարող են ներառել դերասանական վարպետություն, բեմական մտածողություն, տեքստի և հեղինակային նյութի հետ աշխատանք: Նախաձեռնությունը դիտարկվում է որպես մշակութային փոխանակման և թատրոնի կրթական առաքելության մաս:
գ) Համատեղ ստեղծագործական նախագծերի ձևավորում «Հայաստան – Ամերիկա» ձևաչափով, որը կներառի.
– ներկայացումների համատեղ մշակում,
– երկու կողմերի դերասանների և բեմադրիչների մասնակցություն,
– գեղարվեստական փորձի և աշխատանքային մեթոդների փոխանակում,
– միջազգային հանդիսատեսին ուղղված ներկայացումների ստեղծում:
Նշված ուղղությունները ներկայում գտնվում են նախնական պայմանավորվածությունների և հայեցակարգային քննարկման փուլում, սակայն արդեն ձևավորվել է կայուն միջազգային գործընկերության զարգացման հիմքը:

"Երևանի կամերային պետական թատրոն"
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Լուսինե Երնջակյան

Ամսաթիվ՝ 22.01.2026 թ.